

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01**

ք. Երևան

15 հունվարի 2019թ.

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ա ընդ Ա Ավտոհաուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Ը 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար
(ստորագրություն) Ս. Բաղդոյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ա ընդ Ա Ավտոհաուս» ՓԲԸ
ք. Երևան, Նոր Արեշ 3-րդ փողոց, տուն 36
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Ը 1570026066530100
ՀՎՀՀ 00472784

տնօրեն Վ. Թորոսյան
(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130/510	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	200000	1	Արշակունյաց 7	Ֆին. միջոցներ նախատեսվելուց ղևաքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից մինչև 15.12.2019թ.
2	50111130/511	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	200000	1	Արշակունյաց 7	Ֆին. միջոցներ նախատեսվելուց ղևաքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից մինչև 15.12.2019թ.
3	50111130/512	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	200000	1	Արշակունյաց 7	Ֆին. միջոցներ նախատեսվելուց ղևաքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից մինչև 15.12.2019թ.
4	50111130/513	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	400000	1	Արշակունյաց 7	Ֆին. միջոցներ նախատեսվելուց ղևաքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից մինչև 15.12.2019թ.

5	50111130/514	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	2000000	1	Արշակունյաց 7	Ֆին. միջոցներ նախատեսվելուց դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից մինչև 15.12.2019թ.
6	50111130/515	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	1000000	1	Արշակունյաց 7	Ֆին. միջոցներ նախատեսվելուց դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից մինչև 15.12.2019թ.

Գ/Բ	SU-1, SU-2 ծառայությունների - SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղների - այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ մասնաբաժինների					
		1-ն չ/բ	2 չ/բ	3 չ/բ	4 չ/բ	5 չ/բ	6 չ/բ
		Գազ 3102	ՎԱՁ 21703, Պրիորա, ՎԱՁ 210703-110-001	ՎԱՁ 21074	ՎԱՁ 21214 (Նիվա)	Շկողա, Կիա Օպտիմա, Ֆոլկսվագեն պասատ, Կիա Մեռսո, Կիա Ռիո	Հյունդայի, Տուքսոն, Կիա Մորենտո
1	2	3	4	5	6	7	8
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում						
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում					0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0

12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
13	ABS համակարգի ստուգում	0	0	0	0	0	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0	0	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0	0	0	0	0
18	1. Շարժիչ						
19	Շարժիչի հանում և տեղադրում	15000	15000	15000	15000	15000	15000
20	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	5000	5000			5000	5000
21	Նույնը կոնդիցիոների դեպքում	5000				5000	5000
22	Նույնը ԱՓՏ-ի դեպքում					5000	5000
23	Շարժիչի վերանորոգում	20000	20000	20000	20000	20000	20000
24	Նույնը DOHC դեպքում	20000	20000			20000	20000
25	Նույնը V6-ի դեպքում					20000	20000
26	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	2000	2000
27	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
28	Նույնը աջի համար (V6)					1000	1000
29	Նույնը ձախի համար (V6)					1000	1000
30	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	15000	15000
31	Նույնը աջի համար (V6)					10000	10000
32	Նույնը ձախի համար (V6)					10000	10000
33	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	2000	2000	2000	2000	2000	2000
35	Փականի խցուկի փոխարինում	500	500	500	500	500	500
36	Նույնը V6-ի դեպքում					500	500
37	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000	5000
38	Նույնը V6-ի ձախի դեպքում					5000	5000
39	Նույնը V6-ի աջի դեպքում					5000	5000
40	Նույնը DOHC դեպքում	5000	5000	5000	5000	5000	5000
41	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում		2000			5000	5000
42	Հրիչների փոխարինում SOHC	1000	1000	1000	1000	1000	1000
43	Նույնը DOHC դեպքում	1000	1000	1000	1000	1000	1000
44	Ատամնավոր փոկի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
45	Նույնը DOHC դեպքում	1000	1000	1000	1000	1000	1000
46	Նույնը V6-ի դեպքում					1000	1000
47	Ծակածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000

48	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000				1000	1000
49	Նույնը DOHC դեպքում	1000	1000			1000	1000
50	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000				1000	1000
51	Նույնը V6-ի դեպքում					1000	1000
52	Նույնը կոնդիցիոների դեպքում					1000	1000
53	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
54	Նույնը ԱՓՏ-ի դեպքում					2000	2000
55	Մխոցային օդակների փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
56	Նույնը DOHC դեպքում	2000	2000	2000	2000	2000	2000
57	Նույնը V6-ի դեպքում					2000	2000
58	Թափանքի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000	2000
59	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
60	Յուղի և յուղի գտիչի փոխարինում՝ բարձրորակ յուղով, գտիչը պետք է լինի օրիգինալ և համապատասխանի մեքենայի մակնիշին	5000	5000	5000	5000	5000	5000
61	Յուղի պոմպի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	10000
62	Նույնը DOHC դեպքում	1000	1000			1000	1000
63	Նույնը V6-ի դեպքում					1000	1000
64	Ղեկավարման բլոկի վերանորոգում	2000	2000	2000	2000	2000	2000
65	Բռնկման կարգավորում	1000	1000	1000	1000	1000	1000
66	CO կարգավորում	100	100	100	100	100	100
67	խարնարակի հանում և տեղադրում	100	100	100	100	100	100
68	խարնարակի վերանորոգում	100	100	100	100	100	100
69	Օդի գտիչի փոխարինում	100	100	100	100	100	100
70	հնժեկտորի ֆորսունկաների փոխարինում	100	100	100	100	100	100
71	հնժեկտորի ֆորսունկաների մաքրում	100	100	100	100	100	100
72	Բենզամղիչի փոխարինում	100	100	100	100	100	100
73	Վառելիքի գտիչի փոխարինում	100	100	100	100	100	100
74	Վառելիքի բացի հանում և տեղադրում	100	100	100	100	100	100
75	Տրամյորի հանում և տեղադրում	100	100	100	100	100	100
76	Տրամյորի վերանորոգում	1000	1000	1000	1000	10000	1000
77	3. Սառեցման և արտածման համակարգ						
78	Հովհարի փոկի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
79	Հովհարի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
80	Ռադիատորի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
81	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000	1000	1000	1000	1000	1000
82	Նույնը ԱՓՏ-ի դեպքում					1000	1000
83	Ռադիատորի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000

84	Թերմոստատի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
85	Ջրի պոմպի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
86	Նույնը DOHC - V-6 դեպքում					1000	1000
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000				1000	1000
88	Ջրի պոմպի վերանորոգում	0	0	0	0	0	0
89	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0
90	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0
91	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
92	Խլարարի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
93	Նույնը DOHC դեպքում	1000	1000	1000	1000	1000	1000
94	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
95	4. Կցորդում, ՓՏ - ԱՓՏ						
96	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
97	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
98	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
99	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
100	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1000	1000			1000	1000
101	ՓՏ-ի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
102	ՓՏ-ի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000	5000
103	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
104	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
105	Վազբաջալի շարժաբեղի փոխարինում	100	100	100	100	100	100
106	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում					3000	3000
107	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում					3000	3000
108	Նույնը V6-ի համար					3000	3000
109	ԱՓՏ-ի հանում և տեղադրում					3000	3000
110	Նույնը V6-ի համար					3000	3000
111	ԱՓՏ-ի վերանորոգում					3000	3000
112	Նույնը V6-ի համար					3000	3000
113	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում					3000	3000
114	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ						
115	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում				5000	5000	5000
116	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով				5000	5000	5000
117	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում				5000	5000	5000
118	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	5000	5000
119	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	1000	1000	1000	1000	1000	1000

120	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
121	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
122	6. Առջևի և հետևի կամրջակներ						
123	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000	12000
124	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	2000	2000	2000	2000	2000	2000
125	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	2000	2000	2000	2000	2000	2000
126	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	2000	2000	2000	2000	2000	2000
127	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
128	7. Կախոց						
129	Առջ-ի կախոցի լիակատար քանդում և հավաքում	2000	2000	2000	2000	2000	2000
130	Տրավերսի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000	2000
131	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում		1000		1000	1000	5000
132	Անվակունդի առանցքակալի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
133	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	1000	1000	1000	1000	1000	1000
134	Հետին անվակունդի առանցքակալի փոխարինում		1000		1000	1000	1000
135	Նույնը հետին տանող ա/մ-երի համար						1000
136	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում		1000		1000	1000	1000
137	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում		1000		1000	1000	1000
138	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
139	Չսպանակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
140	Չսպակի հանում և տեղադրում	1000			1000		1000
141	Չսպակի վռանների փոխարինում	1000			1000		1000
142	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
143	Ներքևի լծակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
144	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
145	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
146	Միջին ձգանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
147	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
148	Վերևի լծակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
149	Վերևի լծակի վռանների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
150	Գնդե հողակապերի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
151	Ծայրականների հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000

152	Առջ-ի կայունարարի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
153	Առջ-ի կայունարարի վռանների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
154	Առջնի կայունարարի առջնի վռանների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
155	Ջետնի զսպանակի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
156	Ջետնի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
157	Ջետնի ձգածողի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
158	Ջետնի երկաթածողի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
159	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
160	Ջետնի անկյունագծային լծակի հանում և տեղադրում		1000			1000	1000
161	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում		1000			1000	1000
162	Անվաբացքի կարագավորում		1000			1000	1000
163	Չողման աշխատանքներ 1 քառ.սմ համար		1000			1000	1000
164	8. Ղեկային մեխանիզմ						
165	Ղեկային կալունի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
166	Նույնը V6-ի համար					1000	1000
167	Ղեկային կալունի վերանորոգում	2000	2000	2000	2000	2000	2000
168	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
169	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
170	Ջիդրոուժեղարարի պոմպի հանում - տեղադրում	1000				1000	1000
171	Նույնը DOHC դեպքում	1000				1000	1000
172	Ջիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	1000				1000	1000
173	Նույնը DOHC դեպքում	1000				1000	1000
174	Ջիդրոուժեղարարի փողոկի հանում և տեղադրում	1000				1000	1000
175	Նույնը DOHC դեպքում	1000				1000	1000
176	Նույնը կոնոյիցիոների դեպքում	1000				1000	1000
177	ՋՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	1000				1000	1000
178	ՋՈՒ ՂԿ-ի վերանորոգում	1000				1000	1000
179	9. Արգելակային համակարգ						
180	Գլխ. գլանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
181	Գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
182	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
183	Բանվ. գլանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
184	Բանվ. գլանի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
185	Արգելակային համակարգի օդահանում	1000	1000	1000	1000	1000	1000
186	Առջնի սուլպորտի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000

187	Յետևի սուպպորտի հանում և տեղադրում					1000	1000
188	Առջևի սուպպորտի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
189	Յետևի սուպպորտի վերանորոգում					1000	1000
190	Արգելակային փողրակի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
191	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
192	Յետևի սկավառակային կոճղակների փոխարինում					1000	1000
193	Յետևի կոճղակների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
194	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
195	Յետևի արգելակային սկավառակի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
196	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
197	ABS-ի հանում և տեղադրում					1000	1000
198	ABS-ի վերանորոգում					1000	1000
199	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000	2000
200	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	2000	2000	2000	2000	2000	2000
201	10. Էլեկտրասարքավորում						
202	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
203	Զափիչ սարքերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
204	Գնետրատորի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
205	Նույնը V6-ի դեպքում					1000	1000
206	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	1000	1000	1000	1000	1000	1000
207	Գնետրատորի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
208	Մեկնարկիչի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
209	Մեկնարկիչի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
210	Առջ-ի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
211	Յետ-ի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
212	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
213	Վազքաչափի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
214	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
215	Սաքերի պանելի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
216	Արագաչափի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
217	Ազդանշանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
218	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
219	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
220	Ազդանշանային համակարգի տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
221	Մագնիստուլայի տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
222	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000

223	Էլ/հաղորդակարների մասնակի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
224	Էլ/հաղորդակարների հիմն. խուրցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
225	Էլ/հաղորդակարների երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
226	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
227	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
228	Վառոցքի մոմերի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000
229	Կոնդիցիոների լիքավորում	1000	1000	1000	1000	1000	1000
230	Կոնդիցիոների վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
231	11. Այլ ծառայություններ	1000	1000	1000	1000	1000	1000
232	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	1000	1000	1000	1000	1000	1000
233	Ավտոմեքենայի վազում	1000	1000	1000	1000	1000	1000
234	Անիվի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
235	Անվաղողի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
236	Անիվի քայանսավորում	1000	1000	1000	1000	1000	1000
237	Անիվի վալց	1000	1000	1000	1000	1000	1000
238	CO-գոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1000	1000	1000	1000	1000	1000
239	Խառատային աշխատանքներ	1000	1000	1000	1000	1000	1000
240	Փականագործի աշխատանքներ	1000	1000	1000	1000	1000	1000
241	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	100	100	100	100	100	100
242	Ընդամենը ծառայություն						
243	1.Շարժիչ						
244	Շարժիչի բլոկ	20000	20000	20000	20000	35000	35000
245	Շարժիչի գլխիկ	10000	10000	10000	10000	30000	30000
246	Բարձիկ	0	0	0	0	30000	30000
247	Շարժիչի գլխիկի միջադիր	1000	1000	1000	1000	1000	1000
248	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	10000	10000	10000	10000	20000	20000
249	Շարժիչի բաշխիչ լիսեռ	2500	2500	2500	3500	20000	20000
250	Շարժիչի փական դուրս մղող	100	100	100	100	100	100
251	Շարժիչի փական ներս մղող	100	100	100	100	100	100
252	Շարժիչի փականի խցուկ	100	100	100	100	100	100
253	Ծնկած և լիսեռ	10000	10000	10000	10000	20000	20000
254	Ծնկած և լիսեռի խցուկ առջևի	500	500	500	500	500	500
255	Ծնկած և լիսեռի խցուկ հետևի	500	500	500	500	500	500
256	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	500	500	500	500	500	500
257	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	1000	1000	1000	1000	1000	1000
258	Ջենակային տափողակ	1000	1000	1000	1000	1000	1000

259	Մխոց	1000	1000	1000	1000	1000	1000
260	Մխոցային օղակներ	1000	1000	1000	1000	1000	1000
261	Ատամնակիվ	1000	1000	1000	1000	1000	1000
262	Ատամնավոր փոկ	1000	1000	1000	1000	1000	1000
263	Շղթա	1000	1000	1000	1000	1000	1000
264	Հիդրոնձգան	1000	1000	1000	1000	1000	1000
265	Հրիչ	1000	1000	1000	1000	1000	1000
266	Հիդրոհրիչ	1000	1000	1000	1000	1000	1000
267	Բաշմակ	1000	1000	1000	1000	1000	1000
268	Հանգստարար	1000	1000	1000	1000	1000	1000
269	Թափակիվ	1000	1000	1000	1000	1000	1000
270	Թափակիվի պսակ	1000	1000	1000	1000	1000	1000
271	Խցունկ բաշխիչ լիսեռի	1000	1000	1000	1000	1000	1000
272	Շկիվ	1000	1000	1000	1000	1000	1000
273	Շարժաթև	1000	1000	1000	1000	1000	1000
274	Կարտերի միջադիր	1000	1000	1000	1000	1000	1000
275	Միջադիր	1000	1000	1000	1000	1000	1000
276	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
277	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	1800	1800	1800	1800	1800	1800
278	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	1800	1800	1800	1800	1800	1800
279	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	1800	1800	1800	1800	1800	1800
280	Յուղի գտիչ	1000	1000	1000	1000	1000	1000
281	Յուղի պոմպ	1000	1000	1000	1000	1000	1000
282	Յուղի պոմպի շարժաբեր	1000	1000	1000	1000	1000	1000
283	Յուղի ռադիատոր	1000	1000	1000	1000	1000	1000
284	Յուղի փողրակ	1000	1000	1000	1000	1000	1000
285	Յուղի ծորակ	1000	1000	1000	1000	1000	1000
286	Վառոցքի մոմ	1000	1000	1000	1000	1000	1000
287	Բենզոլաք	2000	2000	2000	2000	2000	2000
288	Խառնարակ	2000	2000	2000	2000	2000	2000
289	Խառնարակի վերանորոգման հավաքածու	2000	2000	2000	2000	4000	4000
290	Ինժեկտորի ֆորսունկա	2000	2000	2000	2000	2000	2000
291	Վառելանյութի մղիչ էլեկտրական	2000	2000	2000	2000	2000	2000
292	Վառելանյութի մղիչ մեխանիկական	2000	2000	2000	2000	0	0
293	Վառելանյութի գտիչ	2000	2000	2000	2000	2000	2000
294	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	100	100	100	100	1000	1000
295	Վառելանյութի փողրակ	100	100	100	100	100	100
296	Աքսելերատորի ճոպան	1000	1000	1000	1000	1000	1000

297	Օրի գտիչ	500	500	500	500	1000	1000
298	Զերմաստիճանային տվիչ	100	100	100	100	100	100
299	Յուղի տվիչ	100	100	100	100	100	100
300	Բաշխիչ լիստեղի տվիչ	100	100	100	100	100	100
301	Օրի ծախսի տվիչ	100	100	100	100	100	100
302	Արագաչափի տվիչ	100	100	100	100	100	100
303	Հովհարի տվիչ	100	100	100	100	100	100
304	Ջրի տվիչ	100	100	100	100	100	100
305	Բենզոքաքի տվիչ	100	100	100	100	100	100
306	Մարման ընթացքի կարգավորիչ	100	100	100	100	100	100
307	Մարման ընթացքի տվիչ	100	100	100	100	100	100
308	Դեկավարման համակարգիչ	100	100	100	100	100	100
309	Պարապ ընթացքի տվիչ	100	100	100	100	100	100
310	Դրոսելային փականի տվիչ	100	100	100	100	100	100
311	Թթվածնի տվիչ	100	100	100	100	100	100
312	3. Սառեցման և արտածման համակարգ						
313	Հովհարի փոկ	100	100	100	100	500	500
314	Հովհար	1000	1000	1000	1000	1000	1000
315	Ռադիատոր	2000	2000	2000	2000	2000	2000
316	Ընդարձակող բաք	500	500	500	500	500	500
317	Ռադիատորի փողոթակ	500	500	500	500	500	500
318	Թերմոստատ	500	500	500	500	500	500
319	Ջրի պոմպ	1000	1000	1000	1000	1000	1000
320	Ջրի պոմպի առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
321	Ջրի պոմպի թ-ակ	1000	1000	1000	1000	1000	1000
322	Սառեցման հեղուկ 1 լիտր	500	500	500	500	500	500
323	Ջրի պոմպի սռնանիվ	500	500	500	500	500	500
324	Հոլովակ	500	500	500	500	500	500
325	Փոկ	500	500	500	500	500	500
326	Փոկ կոնդիցիոների	500	500	500	500	500	500
327	Ծորակ	500	500	500	500	500	500
328	Խլարարի ներդիր	500	500	500	500	500	500
329	Խլարարի կախոց	500	500	500	500	500	500
330	Կրոնշտեյն	500	500	500	500	500	500
331	Անուր (համուտ)	0	0	0	0	0	0
332	Խլարար	1000	1000	1000	1000	6000	6000
333	Ռեզոնատոր	1000	1000	1000	1000	5000	5000
334	Վառարանի ռադիատոր	1000	1000	1000	1000	1000	1000

335	4. Կցորդում, ՓՏ - ԱՓՏ						
336	Կցորդման բանվորական գլան	1000	1000	1000	1000	1000	1000
337	Կցորդման գլխավոր գլան	1000	1000	1000	1000	1000	1000
338	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	1000	1000	1000	1000	1000	1000
339	Կցորդման տանող սկավառակ	1000	1000	1000	1000	1000	1000
340	Կցորդման տարվող սկավառակ	1000	1000	1000	1000	1000	1000
341	Կցորդման առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
342	Կցորդման փողոկ	1000	1000	1000	1000	1000	1000
343	ՓՏ-ի առջևի խցուկ	1000	1000	1000	1000	1000	1000
344	ՓՏ-ի հետևի խցուկ	1000	1000	1000	1000	1000	1000
345	ՓՏ-ի հետևի խցուկ	1000	1000	1000	1000	1000	1000
346	ՓՏ-ի առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
347	ՓՏ-ի առաջնային լիսեռ	1000	1000	1000	1000	1000	1000
348	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	1000	1000	1000	1000	1000	1000
349	ՓՏ-ի եղանիկ	1000	1000	1000	1000	1000	1000
350	ՓՏ-ի ատամնանիվ	1000	1000	1000	1000	1000	1000
351	Համաժամիչ	2000	2000	2000	2000	2000	2000
352	Մուֆտ	2000	2000	2000	2000	2000	2000
353	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	2000	2000	2000	2000	2000	2000
354	ԱՓՏ-ի գտիչ					2000	2000
355	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու					2000	2000
356	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ					2000	2000
357	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	1000	1000	1000	1000	1000	1000
358	ԱՓՏ յուղ, 1 լիտր					1000	1000
359	ՓՏ-ի առաջնային լիսեռ	1000	1000	1000	1000	1000	1000
360	Հերմետիկ	1000	1000	1000	1000	1000	1000
361	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ						
362	Բաշխիչ տուփ	5000	1000	1000	1000	1000	1000
363	Բաշխիչ տուփի խցուկ	1000		1000	1000	1000	1000
364	Բաշխիչ տուփի առանցքակալ	1000		1000	1000	1000	1000
365	Բաշխիչ տուփի ատամնանիվ	1000		1000	1000	1000	1000
366	Բաշխիչ տուփի լիսեռ	1000		1000	1000	1000	1000
367	Կարդանային լիսեռ	1000		1000	1000	1000	1000
368	Էլաստիկ մուֆտ	1000		1000	1000	1000	1000
369	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	1000		1000	1000	1000	1000
370	Կարդանային լիսեռի խափուկ	1000		1000	1000	1000	1000
371	6. Առջևի և հետևի կամրջակներ						
372	Հետևի կամ առջևի կամրջակ	5000	5000	5000	5000	5000	5000

373	Ռեդուկտոր	10000	10000	10000	10000	10000	10000
374	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	10000	10000	10000	10000	10000	10000
375	Դիֆֆերենցիալ	10000	10000	10000	10000	10000	10000
376	Դիֆֆերենցիալի սատելլիտ	1000	1000	1000	1000	1000	1000
377	Տանող ատամնանիվի խցուկ	1000	1000	1000	1000	1000	1000
378	Տանող ատամնանիվի առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
379	Դիֆֆերենցիալի առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
380	Կիսատնի	1000	1000	1000	1000	1000	1000
381	Կիսատնու առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
382	Կիսատնու միջադիր	1000		1000	1000	1000	1000
383	Կիսատնու խցուկ	1000		1000	1000	1000	1000
384	Կարգավորիչ տափողակ	1000		1000	1000	1000	1000
385	7. Կախոց						
386	Տրավերս	2000	2000	2000	2000	5000	5000
387	Կրոնշտեյն	1000	1000	1000	1000	1000	1000
388	Ձախ կամ այ հողակապ		1000		1000	1000	1000
389	Ձախ կամ այ հողակապի փոշերիկնոց		1000		1000	1000	1000
390	Անվակունդ		1000		1000	1000	1000
391	Անվակունդի խցուկ		1000		1000	1000	1000
392	Անվակունդի ներքին առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
393	Անվակունդի արտաքին առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
394	Ջետնի անվակունդի ներքին առանցքակալ		1000			1000	1000
395	Ջետ-ի անվակունդի արտաքին առանցքակալ		1000			1000	1000
396	Ձախ կամ այ հողակապի խցուկ	1000	1000	1000	1000	1000	1000
397	Հարվածամեղմիչի թասակ	1000	1000	1000	1000	1000	1000
398	Չսպանակ	1000	1000	1000	1000	1000	1000
399	Առջևի հարվածամեղմիչ	1000	1000	1000	1000	1000	1000
400	Հարվածամեղմիչի փոշերիկնոց	1000	1000	1000	1000	1000	1000
401	Հարվածամեղմիչի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
402	Ներքևի լծակ	1000	1000	1000	1000	1000	1000
403	Ներքևի լծակի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
404	Վերևի լծակ	1000	1000	1000	1000	1000	1000
405	Վերևի լծակի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
406	Գնդե հողակապ	1000	1000	1000	1000	1000	1000
407	Առջևի կայունարար	1000	1000	1000	1000	1000	1000
408	Առջևի կայունարարի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
409	Առջևի կայունարարի առջևի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
410	Ջետնի գսպանակ	1000	1000	1000	1000	1000	1000

411	Յետևի ցնցամեղմիչ	1000	1000	1000	1000	1000	1000
412	Յետևի մետաղաձող (շտանգա)	1000	1000	1000	1000	1000	1000
413	Յետևի մետաղաձողի (շտանգա) վռան	1000	1000	1000	1000	1000	1000
414	Յետևի անկյունագծային լծակ	1000	1000	1000	1000	1000	1000
415	Անկյունագծային լծակի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
416	Չսպակ (ռեսսորա)	1000	1000	1000	1000	1000	1000
417	Չսպակի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
418	Չսպակի միջադիր	1000	1000	1000	1000	1000	1000
419	Չսպակի բռնիչ	1000	1000	1000	1000	1000	1000
420	Աջ կամ ձախ ձգան	1000	1000	1000	1000	1000	1000
421	Ծայրակալ	1000	1000	1000	1000	1000	1000
422	Ձգան մեջտեղի	1000	1000	1000	1000	1000	1000
423	Անվահեծ						
424	8. Ղեկային մեխանիզմ						
425	Ղեկային կալուն	1000	1000	1000	1000	1000	1000
426	Ղեկային կալունի առանցքակալ	1000	1000	1000	1000	1000	1000
427	Ղեկային կալունի խաչուկ	1000	1000	1000	1000	1000	1000
428	Յիդրոուժեղարար	1000				1000	1000
429	Յիդրոուժեղարարի փոկ	1000				1000	1000
430	Յիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	1000				1000	1000
431	Յիդրոուժեղարարի պոմպ	1000				1000	1000
432	Յիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	1000				1000	1000
433	Ղեկային ձող	1000	1000	1000	1000	1000	1000
434	Ղեկային ձողի ծայրակալ	1000	1000	1000	1000	1000	1000
435	Յիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	1000				1000	1000
436	Ճոճանակ	1000	1000	1000	1000	1000	1000
437	Ճոճանակի վռան	1000	1000	1000	1000	1000	1000
438	7. Արգելակային համակարգ						
439	Գլխ. գլան	1000	1000	1000	1000	1000	1000
440	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000	1000	1000	1000	1000
441	Վակուումային ուժեղարար	1000	1000	1000	1000	1000	1000
442	Բանվ. գլան	1000	1000	1000	1000	1000	1000
443	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000	1000	1000	1000	1000
444	Արգելակային փողրակ	1000	1000	1000	1000	1000	1000
445	Սուկադրոտի ուղղորդիչ	1000	1000	1000	1000	1000	1000
446	Սուկադրոտի մանժետ	1000	1000	1000	1000	1000	1000
447	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	1000	1000	1000	1000	1000	1000
448	Յետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ					2000	2000
	Յետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ						

449		2000	2000	2000	2000	2000	2000
450	Առջևի արգելակային սկավառակ	2000	2000	2000	2000	2000	2000
451	Յետևի արգելակային սկավառակ	2000	2000	2000	2000	2000	2000
452	Ձեռքի արգելակի ճոպան	2000	2000	2000	2000	2000	2000
453	ABS-ի տվիչ	2000	2000	2000	2000	2000	2000
454	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	2000	2000	2000	2000	2000	2000
455	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2000	2000	2000	2000	2000	2000
456	Ձեռքի արգելակի ճոպան	2000	2000	2000	2000	2000	2000
457	9. Էլեկտրասարքավորում						
458	Գեներատոր	2000	2000	2000	2000	2000	2000
459	Գեներատորի դիողային կամրջակ	2000	2000	2000	2000	2000	2000
460	Գեներատորի ռեյե	2000	2000	2000	2000	2000	2000
461	Գեներատորի առանցքակալ	2000	2000	2000	2000	2000	2000
462	Ստարտեր	2000	2000	2000	2000	2000	2000
463	Ստարտերի ռեյե	2000	2000	2000	2000	2000	2000
464	Ստարտերի ածուխ	2000	2000	2000	2000	2000	2000
465	Բենդեքս	2000	2000	2000	2000	2000	2000
466	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	2000	2000	2000	2000	2000	2000
467	Առջևի լապտեր	2000	2000	2000	2000	2000	2000
468	Առջևի թարթիչ	2000	2000	2000	2000	2000	2000
469	Յետևի լապտեր	2000	2000	2000	2000	2000	2000
470	Յետևի թարթիչ	2000	2000	2000	2000	2000	2000
471	Արգելակային լապտեր	2000	2000	2000	2000	2000	2000
472	Լամպ	2000	2000	2000	2000	2000	2000
473	Էլեկտրական անջատիչ	2000	2000	2000	2000	2000	2000
474	Էլեկտրական տվիչ	2000	2000	2000	2000	2000	2000
475	Էլեկտրական չափիչ սարք	2000	2000	2000	2000	2000	2000
476	Բռնկման կողպեք	2000	2000	2000	2000	2000	2000
477	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	2000	2000	2000	2000	2000	2000
478	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	2000	2000	2000	2000	2000	2000
479	Վառոցքային լարերի խուրց	2000	2000	2000	2000	2000	2000
480	Վառոցքի մոմի ծայրակալ	2000	2000	2000	2000	2000	2000
481	Վազքաչափ	2000	2000	2000	2000	2000	2000
482	Վազքաչափի ճոպան	2000	2000	2000	2000	2000	2000
483	Արագաչափ	1000	1000	1000	1000	1000	1000
484	Ազդանշան	1000	1000	1000	1000	1000	1000
485	Ապակեվազիչ	1000	1000	1000	1000	1000	1000
486	Ապակեվազիչի շարժիչ	1000	1000	1000	1000	1000	1000
487	Դռների կենտրոնական փական	1000	1000	1000	1000	1000	1000

488	Ազդանշանային համակարգ	1000	1000	1000	1000	1000	1000
489	Մագնիտոլա	1000	1000	1000	1000	1000	1000
490	Էլեկտրամաքարծիչ	1000	1000	1000	1000	1000	1000
491	Էլեկտրամաքարծիչի շարժիչ	1000	1000	1000	1000	1000	1000
492	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր վերանորոգման համար	1000	1000	1000	1000	1000	1000
	Ընդամենը ըստ չափաբաժնի	587600	563600	530600	556600	856400	873400

Մգեցված վանդակները ծառայության տեսակ չեն հանդիսանում

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար  Գ. Գրիգորյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ա ընդ Ա Ավտոհաուս» ՓԲԸ
ք. Երևան, Նոր Արեշ 3-րդ փողոց, տուն 36
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026066530100
ՀՎՀՀ 00472784

տնօրեն  Վ. Թորոսյան



Կ.Տ.

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն